# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2022 թվականի N 147-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի հարավային մասում գտնվող, 06-002-0047-0001 ծածկագրից առանձնացված, 0.00984 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, 44/3 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. ապրիլի 26
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2022 թվականի N 148-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2022 թվականի ապրիլի 28-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Համայնքի ղեկավարի հաղորդումն Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, 6/1 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

6. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, 77/1 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. ապրիլի 27
ք. Ալավերդի